«Ջուր և առողջություն» արձանագրության և Հայաստանում Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ խորհրդակցական ժողովի արձանագրություն

Ամսաթիվը `5 դեկտեմբերի, 2017թ.

Վայրը `Հյուրանոց Մարիոթ Արմենիա, Երևան

Մասնակիցները՝ Հանդիպմանը ներկա էին 25 մասնակիցներ, որոնք ներկայացնում էին հիմնական ազգային շահառուներին, ինչպիսիք են ՀՀ Առողջապահության նախարարությունը (ԱՆ), ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (ԷԵԲՊՆ), ՀՀ Բնապահպանության նախարարությունը (ԲՆ), միջազգային կազմակերպություններ (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) Հայաստան և Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ) Հայաստան) և Ծրագրեր (Եվրոպական միության ջրային նախաձեռնություն+ (EUWI +)), մասնավոր հատվածը («Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն), Ակադեմիկոս Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ, հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ) («Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) և «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա), անկախ փորձագետներ և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ-ի ԵՏՀ):

Նիստը *կազմակերպվել* էր ՄԱԿ-ի ԵՏՀ կողմից, ՄԱՁԾ-ի նյութատեխնիկական աջակցությամբ, EUWI + և ՄԱԿ-ի զարգացման հաշվի (ՄԱՁՀ) (1415AF) ծրագրերի շրջանակներում և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ԷԵԲՊՆ) ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) և ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (ՋՌԿԳ) համանախագահությամբ:

Խորհրդակցության նպատակն էր՝ քննարկել.

i) Հայաստանի Հանրապետությունում Ջրամատակարարման և ջրահեռացման հավասարհասանելիության ապահովման 2018-2020թթ. Գործողությունների պլանի իրականացման ուղիները և միջոցները, և

ii) ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրային հոսքերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից ՄԱԿ-ի ԵՏՀ/Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) - եվրոպական տարածաշրջանային գրասենյակի «Ջուր և առողջություն» արձանագրության շրջանակներում թիրախների վերանայման/թարմացման մոդելներ և Հայաստանի կողմից Արձանագրության հնարավոր վավերացման համար անհրաժեշտ աջակցություն:

Բացման նիստին Խորհրդակցության համանախագահները՝ Ջրային տնտեսության պետական կոմիտեի փոխնախագահ Վոլոդյա Նարիմանյանը և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ Վահան Դավթյանը, ողջունեցին նիստի մասնակիցներին: Բացման հայտարարությամբ հանդես եկավ նաև ՄԱԿ-ի ԵՏՀ ներկայացուցիչը: Բացման խոսքից հետո նրանք շնորհավորեցին մասնակիցներին՝ Հայաստան-Եվրոպական Միություն (ԵՄ) համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրման կապակցությամբ:

1-ին նիստ. Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն

Առաջին նիստը նախագահում էր պարոն Նարիմանյանը, ով ներկայացրեց օրակարգի հիմնական կետերը: Հանդիպման մասնակիցները օրակարգն ընդունեցին ըստ ներկայացվածի:

Այնուհետև, պարոն Նարիմանյանը ամփոփեց «Ջուր և առողջություն» Արձանագրության համատեքստում իրականացվող գործունեության կարգավիճակը՝ նշելով, որ թեև Հայաստանը դեռևս Արձանագրության կողմ չէ, այն հաջողությամբ իրականացրել է այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Հայաստանում «Ջուր և առողջություն» Արձանագրության համաձայն թիրախների սահմանման գործընթացը, 2013-2014թթ.», «Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության գնահատումը, 2016թ.» և «Հավասար հասանելիության գործողությունների պլանի մշակումը, 2017թ.»:

ՋՏՊԿ-ի Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Առուշանյանը ներկայացրեց Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման ուղղությամբ ընդունված 2018-2020 թթ. գործողությունների պլանը: Գործողությունների պլանի մշակումը հիմնված էր երկրում ջրի և ջրահեռացման հավասարաչափ հասանելիության գնահատման արդյունքների վրա՝ կիրառելով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հավասար հասանելիության Ինքնագնահատման քարտը:

«ՀԿՀԱԱԾՄ» ՀԿ-ի ղեկավար Ելենա Մանվելյանը ներկայացրեց «Ջուր և առողջություն» Արձանագրության իրականացման գործում հասարակության մասնակցությունը, մասնավորապես շեշտադրելով Արձանագրության 5 (i) հոդվածը և Օրհուսի կոնվենցիան, ինչպես նաև ՀԿՀԱԱԾՄ-ի դերը իրականացված հանրային խորհրդակցություններում:

Ձեկույցներին հետևեց հարց և պատասխանի փուլը: Մասնակիցները պարզաբանող հարցեր տվեցին և մեկնաբանեցին Հայաստանում ջրի և ջրահեռացման հավասար հասանելիությունը, մասնավորապես ուշադրություն դարձնելով աշխարհագրական առանձնահատկություններին և շեշտադրելով 579 համայնքներին վերաբերող հիմնահարցեր (համայնքներ, որոնք չեն ստանում ծառայություններ մասնագիտացված կազմակերպությունների կողմից), ինչպես նաև անդրադարձ կատարվեց խոցելի խմբերին և Գործողությունների ծրագիրը իրականացնելու համար հնարավոր ֆինանսական աղբյուրներին:

Գործողությունների պլանի իրականացման վերաբերյալ քննարկումների ժամանակ վեր հանվեցին մի շարք հարցեր և առաջարկվեցին հնարավոր քայլեր դրանք վերացնելու ուղղությամբ՝

- *<u>Գործողությունների պլանի իրականացման հնարավոր ֆինանսավորման տարբերակները.</u>* Ընդունելով Գործողությունների ծրագիրը, Հայաստանը քաղաքական կամք դրսևորեց ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության արդարացի սկզբունքների իրագործման ուղղությամբ: Սակայն գործողությունների ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները դեռևս ապահովված չեն:

  Գործողությունների պլանի առաջին գործողությունն է «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության օրենսդրական խոչընդոտները» հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ապահովման նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերհանում: Ծրագիրը շրջանառվեց շահագրգիռ կողմերի միջև և համաձայնություն ձեռք բերվեց առ այն, որ առաջին գործողությունը շատ կարևոր է հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից: Առաջին գործողության համակատարողները յոթն են՝ այդ թվում ՀՀ առողջապահության նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և այլն: Գործողության իրականացման համար նախատեսված բյուջեն, ինչպես նշված է Գործողությունների պլանում, կազմում է 25 մլն. դրամ (մոտ 51500 ԱՄՆ դոլար):

  Տարբեր եկամուտ ունեցող խմբերի համար մատչելի ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության համար առաջարկվել է ներմուծել ջրամատակարարման և ջրահեռացման այնպիսի սակագին, որը կապահովի ֆինանսական կայունություն և մատչելիություն ամենաչքավոր խմբերի համար: Սա նշանակում է, որ օգտագործողները տարբեր գումար են վճարում սպառման տարբեր մակարդակների համար, օրինակ, ջրի մեկ միավորի սակագինը ավելանում է սպառման ծավալի մեծացմանը զուգընթաց: Հայաստանում մոտեցումը հակառակն է, ջրի մեկ միավորի սակագինը նվազում է սպառման ծավալի մեծացմանը զուգընթաց:

  Հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը, որոշ մասնակիցներ առաջարկեցին իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման հավասարաչափ ապահովման պիլոտային ծրագրեր:

  Մասնակիցները տեղեկացվեցին ՋՏՊԿ- ի կողմից, որ չնայած Գործողությունների ծրագիրը նախատեսվում էր սկսել 2018 թ.-ից, սակայն որոշակի գործողություններ արդեն իսկ ընթացքի մեջ են՝ չսպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության ապահովման նպատակով:

- *ԵՄ հինգ դիրեկտիվների հետ փոխկապակցվածությունը* (Ջրի շրջանակային դիրեկտիվ, Ջրհեղեղների դիրեկտիվ, Քաղաքային կոյուղաջրերի դիրեկտիվ, Խմելու ջրի դիրեկտիվ և Նիտրատների դիրեկտիվ): Ստորագրելով Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության մասին Համաձայնագիրը՝ Հայաստանը համաձայնել է ներդաշնակեցնել ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրության հետ: Ներդաշնակեցման առաջին քայլը պետք է լինի ազգային ջրային օրենսդրության վերլուծությունը ԵՄ հինգ դիրեկտիվների համատեքստում: Այս նախաձեռնությանը մասնակիորեն կաջակցի ՄԱԿ-ի ԵՏՀ-ն՝ ԵՄՁՆ+ նախագծի շրջանակներում, ազգային օրենսդրության ներդաշնակեցման ճանապարհային քարտեզի մշակման միջոցով:

  Խորհրդակցության մասնակիցներն առաջարկեցին զուգահեռաբար իրականացնել ջրային օրենսդրության ազգային գնահատում հավասարաչափ հասանելիության տեսանկյունից և վերը նշված ԵՄ Դիրեկտիվների կիրառման համատեքստում:

- *Դոնորների ներգրավումը*. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը նշեց, որ ջուրը ոչ միայն խմելու նպատակով օգտագործման համատեքստում գտնվող թեմա է, այլ ներառում է ավելի լայն ոլորտային շրջանակ, որոնցից են, մասնավորապես, սոցիալական, առողջապահական, գյուղատնտեսական և այլ ոլորտները: Այլ ոլորտների բարելավմանն ուղղված գործողությունները անուղղակիորեն նպաստում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի բարելավմանը: Առաջարկվեց գնահատել ջրամատակարարման և ջրահեռացման և այլ ոլորտների փոխկապակցվածությունը և համապատասխան ելակետային տվյալները:

- *Կայուն զարգացման նպատակների* (ԿԶՆ) հետ կապակցվածությունը. ՄԱԶԾ-Հայաստանն իրազեկեց մասնակիցներին, որ 2018թ. առաջին կիսամյակում Հայաստանը վերջնականացելու է իր ազգային ԿԶՆ թիրախները և առաջարկեց վերոհիշյալ գործողությունների քննարկումը ներառել այդ գործընթացի շրջանակներում:

Առաջին նիստի քննարկումների արդյունքները և դրանց գծով կայացված որոշումներն ամփոփված են ստորև:

- *Հաշվի առնելով, որ հավասար հասանելիության ապահովման գործողությունների պլանը համարվել է երկրի համար առաջնահերթություն, խորհրդակցության մասնակիցները դիմեցին ԵՄ-ին և ՄԱԿ-ի ԵՏՀ-ին՝ ջրային օրենսդրության համակարգի վերլուծության իրականացման և ԵՄՁՆ+ ծրագրի միջոցով ջրամատակարարման և ջրահեռացման համահավասար մատչելիության ապահովման օրենսդրական սահմանափակումների բացահայտման աշխատանքներում օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով:*

- *Հաշվի առնելով, որ Հայաստանը ստորագրել է Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագիրը և պարտավորվում է իրագործել ներպետական օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ օրենսդրության հետ, հանդիպման մասնակիցները պայմանավորվեցին Եվրամիության հինգ դիրեկտիվների հետ կապված աշխատանքները քննարկել ԵՄՁՆ ԱՔԵ հաջորդ նիստին, որը կկայանա 2018թ. մարտին: ԵՄ-ին և ՄԱԿ-ի ԵՏՀ-ին (UNECE) խնդրանք է ուղղվել ԵՄՁՆ+ ծրագրի շրջանակներում օժանդակել Հայաստանին՝ ջրօգտագործմանն առնչվող ԵՄ 5 դիրեկտիվների կիրառման նախնական ճանապարհային քարտեզի մշակման գործում՝ հաշվի առնելով նաև ԵՄ-Հայաստան նոր գործընկերության համաձայնագրի դրույթները:*

2-րդ նիստ. Հայաստանում ՄԱԿ-ի ԵՏՀ/ԱՀԿ «Ջուր և առողջություն» արձանագրության կիրառումը

Երկրորդ նիստի ընթացքում քննարկվեցին Արձանագրության կիրառման հետ կապված հարցեր: Երկրորդ նիստը համանախագահում էր նաև Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ պարոն Նարիմանյանը:

Հայաստանում խմելու ջրի և ջրահեռացման հարցերով ավագ անկախ փորձագետ տկն. Էմմա Անախասյանը ներկայացրեց 2013-2014թթ. Արձանագրության համատեքստում սահմանված Հայաստանի ազգային նպատակային ցուցանիշները, դրանց կիրառելիությունը ներկա իրավիճակի նկատմամբ, ինչպես նաև վերանայման և/կամ նոր թիրախների սահմանման և նպատակային ամսաթվերի որոշման անհրաժեշտությունը: Այս թիրախները և նպատակային ժամկետները պաշտոնապես չեն ընդունվել:

Իր զեկույցում տիկին Անախասյանը ներկայացրեց սահմանված թիրախների և նպատակային ժամկետների արագացված գնահատման արդյունքները՝ ա) թիրախների իրականացման համար պատասխանատու հիմնական նախարարություններում կատարված կառուցվածքային փոփոխությունները, բ) օրենսդրության փոփոխությունները, իրավական ակտերում փոփոխությունները, նոր իրավական ակտերը և ոլորտներում մշակված ռազմավարությունները. գ) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցողների հետ կապված փոփոխությունները. դ) ավարտված/ժամկետանց կարճաժամկետ նպատակային ժամկետները, ե) որոշակի իրականացված թիրախներ կամ իրականացման փուլում գտնվող թիրախներ, և զ) ներկայումս ոչ կիրառելի ցուցանիշներ:

Այնուհետև, տիկին Անախասյանն առաջարկեց իրականացնել իրավիճակի խորացված վերլուծություն և վերանայել թիրախները և նպատակային ժամկետները, հաշվի առնելով հետևյալ նկատառումները՝ ա) Հայաստանում կառավարման նախագահական համակարգից խորհրդարանական կառուցվածքին անցումը, բ) Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի կնքումը, գ) ազգային ԿՀՆ-ների հետ համապատասխանություն ապահովելու անհրաժեշտությունը, դ) կոյուղաջրերի հեռացման խնդրին քաղաքական մակարդակում կարևորություն ունենալու հանգամանքը, և ե) Հավասար հասանելիության գործողությունների ծրագրի ընդունումը:

Մասնակիցներին խնդրեցին ներկայացնել վերջին զարգացումները:

ՋՏՊԿ-ի ներկայացուցիչ Մուշեղ Կարապետյանը և Արմինե Առուշանյանը ներկայացրեցին Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի վերջին զարգացումները: Նրանք մասնավորապես նշեցին չսպասարկվող 579 համայնքները, ինչպես նաև ներկայացրեցին խմելու ջրի և ջրահեռացման ծառայությունների իրավիճակի բարելավմանն ուղղված գործող ռազմավարությունները: Պարոն Կարապետյանը հայտարարեց, որ առաջին անգամ է, որ կառավարությունն անդրադառնում էչսպասարկվող համայնքների խնդիրներին իր 2017-2022 թթ. Գործողությունների ծրագրում: Ավելին, առաջին անգամն է, որ իրականացվել է համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման հարցերի համապարփակ գնահատում: 2018 թ.-ին որոշ չսպասարկվող համայնքների համար կընտրվի նոր օպերատոր և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն նույնպես շահագրգռված է մասնակցելու մրցույթին: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն ստանձնել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման վիճակի բարելավման պարտավորություն՝ ըստ վարձակալության պայմանագրի ոլորտում 37,5 մլրդ դրամ (մոտ 77,4 մլն. ԱՄՆ դոլար) ներդրում կատարել 15 տարվա ընթացքում:

Ջրային ռեսուրսների մոնիտորինգի և կադաստրի բաժնի պետի տեղակալ Գայանե Հովսեփյանը տեղեկություններ ներկայացրեց Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի վերջին զարգացումների վերաբերյալ: Տիկին Հովսեփյանը նշեց, որ մշակվել և ընդունվել են ընդհանուր առմամբ վեց ավազանային շրջաններից երեքի գետավազանային կառավարման պլանները: Դրանց ընդունումը ներառվել է որպես «Ջուր և առողջություն» Արձանագրության համատեքստում սահմանված նպատակային ցուցանիշ: Նա մասնավորապես նշեց, որ վերանայվել է Հայաստանի ջրային օրենսգիրքը՝ վերջին մի քանի տարիների ընթացքում բացահայտված իրավական բացթողումների վերացման նպատակով: Լուծում են ստացել վերականգնվող ջրօգտագործմանն առնչվող հարցեր, և ՀՀ Ջրային օրենսգրքի համար մշակվել է ջրահեռացմանը վերաբերող նոր գլուխ, որն այժմ ընթերցման փուլում է խորհրդարանում: Բացի այդ, ներկայումս թարմացվում է պետական ջրային կադաստրի տեղեկատվական համակարգը, որն այժմ օգտագործվում է որպես տվյալների պահեստավորման և տարածման տեղեկատվական գործիք:

Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Նունե Բակունցը նշեց, որ որպես հիմնական շահառուներ, իրենք շահագրգռված են ներդնել Արձանագրության դրույթները: Բացի այդ, վերջին երեք տարիների ընթացքում երկրում իրավիճակը փոխվել է, ինչը պահանջում է թիրախների և նպատակային ժամկետների վերանայում:

ՄԱԿ-ի ԵՏՀ ներկայացուցիչ Ալիշեր Մամաջանովը ներկայացրեց Կայուն զարգացման նպատակների և «Ջուր և առողջություն» Արձանագրության հիման վրա թիրախների սահմանման փոխկապակցվածությունները: Նա ընդգծեց Արձանագրության դերը որպես հզոր գործիք՝ 2030-ի օրակարգի իրագործման և դրա ուղղությամբ ԿԶՆ-ների իրագործման առաջխաղացման և գործադրման առումով: Արձանագրությունը ունի ուժեղ ինտեգրված և միջոլորտային մոտեցում, և դրա դրույթներն ու սկզբունքները լիովին համահունչ են ԿԶՆ 6 «Մաքուր ջուր և ջրահեռացում», ԿԶՆ 3 «Առողջություն և բարեկեցություն» և ջրամատակարարման, ջրահեռացման և առողջապահական այլ թիրախներին: Պարոն Մամաջանովը նաև ներկայացրեց[1] Հայաստանի համար ՀՄԾ-ի վերջին գնահատականները, հատկապես խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների անվտանգ կառավարման գնահատականները: Այդ գնահատականները կօգտագործվեն ՀՄԾ- ի կողմից որպես ելակետ՝ ԿԶՆ 6 իրագործման համար:

Նա նաև ներկայացրեց թիրախների և նպատակային ժամկետների վերանայման գործընթացի առաջարկվող մեխանիզմները, ներառյալ վերանայման գործընթացի ժամանակացույցը և վերանայման/մշակման գործընթացում աշխատելու նպատակով փորձագետների/աշխատանքային հիմնական խումբ ստեղծելու առաջարկը:

Հարց-պատասխանի փուլում մասնակիցները դրականորեն գնահատեցին աշխատանքային խմբի ստեղծման առաջարկը և պարզաբանող հարցեր տվեցին դրան առնչվող խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես, քննարկումը ծավալվեց հետևյալ հարցերի շուրջ.

- *Չսպասարկվող համայնքներ նոր օպերատորի մուտք գործելու դեպքում սակագնային փոփոխությունները*. Այս հարցի վերաբերյալ դիտարկումներից մեկն այն էր, որ ակնկալվում է, որ չսպասարկվող համայնքներում այդ ծառայությունների ապահովման համար կընդունվի կառավարության նոր որոշում, և սակագինը

[1] ԱՀԿ-ն և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համատեղ մշտադիտարկման ծրագիրը (ՀՄԾ) ՄԱԿ-ի պաշտոնական մեխանիզմն է, որի միջոցով իրականացվում է ջրամատակարարման և ջրահեռացման համապարփակ պարտավորությունների մշտադիտարկում:

պետք է մնա նույնը, ինչպիսին որ սպասարկվող համայնքների համար (1000 լիտրի համար 180 դրամ):

- *«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ներդրումների հետ կապված մտահոգություններ.* Մտահոգությունը կայանում է նրանում, որ պարտավորությունները խիստ են, և 15 տարվա գործունեության արդյունքում խմելու ջրի և ջրահեռացման համակարգերը պետք է վերադարձվեն նույն վիճակով: Բացի այդ, վարձակալության պայմանագրի համաձայն՝ նշված ժամանակահատվածից հետո ջրի կորուստը պետք է նվազեցվի մոտ 30% -ով: Պարտավորությունները չկատարելու դեպքում տույժերը շատ բարձր են:

- *Խմելու ջրի որակի ապահովում.* Խմելու ջրի որակի չափանիշները սահմանված են ԱՆ կողմից: Առողջապահության նախարարությունը պարբերաբար, ամսական կտրվածքով վերահսկում է խմելու ջրի որակը և տեղեկացնում է ՋՏՊԿ- ին հետազոտությունների արդյունքների մասին: Այս արդյունքները ուղարկվում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին և, եթե առկա են թերություններ, ընկերությունը պարտավոր է ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու ուղղությամբ, և այդ մասին տեղեկացնել ՋՏՊԿ -ին:

- *Չսպասարկվող համայնքների դասակարգումը.* Ներկայումս չսպասարկվող համայնքները դասակարգվում են ըստ իրենց ջրամատակարարման համակարգի պայմանների:

- *Խմելու ջրի և ջրահեռացման համակարգի նոր մոդել.* Չսպասարկվող համայնքների կողմից իրենց համակարգերը պատշաճ կերպով շահագործումը ապահովելու նպատակով կարող է ներդրվել նոր «նախագծել, կառուցել և շահագործել» մոդելը:

- *Թիրախների մի քանի օրինակներ, որոնք իրականացվել են Արձանագրության համատեքստում*. Գյուղական բնակչության համար անվտանգ խմելու ջրի հասանելիությունը բարելավելու համար մինչև 2016թ. նախատեսվել էր կառուցել և վերականգնել ջրամատակարարման համակարգերը 15 համայնքներում: Սակայն իրականում հասանելիությունը բարելավվել է արդեն 25 համայնքներում:

  Չմշակված կոյուղաջրերի արտանետումների կրճատման նպատակով նախատեսվում էր մինչև 2016 թ. Դիլիջանում և Ջերմուկում կառուցել կոյուղաջրերի մշակման կայաններ: Ներկայումս կոյուղաջրերի մշակման կայաններ են կառուցվել և/կամ վերականգնվել նաև Մարտունիում, Գավառում, Վարդենիսում և «Աէրացիա»-ում (II փուլ - մեխանիկական մշակում):

- *Մտահոգությունները՝ կապված ջրի, հատկապես ձկնորսական տնտեսությունների ջրերի կրկնակի օգտագործման հետ.* Մտահոգությունները կապված էին ձկնորսական տնտեսություններից ոռոգման նպատակով օգտագործվող ջրի որակի հետ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում ոռոգման ջրի ստանդարտներ չկան: Մտահոգությունն առնչվում էր ոչ միայն ջրերի օրգանական բնութագրիչներին (համն ու հոտը), այլև որակին, քանի որ այն կարող է պարունակել հակաբիոտիկներ: Այս ջրերը կարող են օգտագործվել հիմնականում որպես տեխնիկական ջրեր, օրինակ՝ քարի վերամշակման արդյունաբերությունում, սառեցման համար և այլն:

- Քննարկվեց *կլիմայի փոփոխության ազդեցությունը խմելու ջրի և ջրահեռացման իրավիճակի* վրա: Մասնակիցներին տեղեկացրեցին, որ 2013-2014 թվականներին թիրախավորման գործընթացի ընթացքում հաշվի են առնվել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման վրա կլիմայի փոփոխության ազդեցությունները: Այս փուլում՝ Արձանագրության համատեքստում սահմանված

թիրախների վերանայման/ թարմացման աշխատանքներում, նոր աշխատանքային խմբում ներգրավվելու է կլիմայական փոփոխությունների փորձագետ:

Քննարկման արդյունքում ընդունվեցին հետևյալ որոշումները.

- *Խորհրդակցության մասնակիցները կարևորեցին ՄԱԿ-ի ԵՏՀ/ԱՀԿ «Ջուր և առողջություն» արձանագրության դրույթների իրագործման կարևորությունը և առաջարկեցին ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության աջակցությամբ ԵՄՋՆ+ ծրագրի օժանդակությամբ իրականացնել Արձանագրության համատեքստում ազգային թիրախների և նպատակային ժամկետների վերանայում:*
- *Հանդիպման մասնակիցները դրական արձագանքեցին թիրախները և նպատակային ժամկետները սահմանելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծման առաջարկին՝ ելնելով նոր իրավիճակի վերլուծությունից: ՋՏՊԿ, ՋՌԿԳ և ԱՆ-ի ներկայացուցիչներին առաջարկվեց փորձագետներ առաջադրել (մեկական փորձագետ՝ յուրաքանչյուր կառույցից) աշխատանքային խմբում ներառման համար:*

3-րդ նիստ. «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման գործընթացի ներկայիս կարգավիճակը

3-րդ Նիստը վարում էր ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ Վահան Դավթյանը: Պարոն Դավթյանը հանդիպման մասնակիցներին հիշեցրեց, որ 2016 թ. երրորդ անգամ նախաձեռնվել է «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման գործընթացը: Միևնույն ժամանակ, նա նշեց, որ անհրաժեշտ է դիտարկել, թե արդյոք կա Արձանագրության վավերացման ճանապարհային քարտեզի թարմացման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով վերջին երեք տարիների ընթացքում երկրում տեղի ունեցած փոփոխությունները:

Արձանագրության համատեքստում սահմանված թիրախների թարմացման/վերանայման վերաբերյալ քննարկումները շարունակվեցին: Այնուհետև քննարկվեց վերանայման գործընթացի կազմակերպումը (հանձնարարականների ձևակերպումը, շահառուները, գործունեության ժամկետները) և ժամանակացույցը:

Ծրագրի կառավարումը կիրականացվի ԵՄՋՆ ազգային քաղաքական երկխոսության համակարգող կոմիտեի միջոցով: ԱՆ, ՋՏՊԿ-ի, ՋՌԿԳ-ի և 2 կամ 3 անկախ փորձագետների կողմից կազմված փորձագետների ազգային աշխատանքային խումբը կզբաղվի ելակետային տվյալների վերլուծության և թիրախների և նպատակային ժամկետների վերանայման աշխատանքներով: ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարությունը կաջակցի թիրախների և նպատակային ժամկետների սահմանման աշխատանքներին: Հանրության մասնակցությունը կապահովվի քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների միջոցով:

Առաջարկվող աշխատանքի ժամանակացույցը հետևյալն է.

- Ելակետային տվյալների վերլուծության թարմացում՝ 2018թ. մարտ:
- ԱՔԵ-ի համակարգող կոմիտեի հանդիպում և Ելակետային տվյալների վերանայման արդյունքների ներկայացում՝ 2018 թ. մարտ:
- Առաջնահերթությունների սահմանում, թիրախների և նպատակային ժամկետների, համապատասխան միջոցառումների և ցուցանիշների նախագծերի մշակում, 2018թ. հունիս:

- Խորհրդակցություն քաղաքացիական հասարակության հետ թիրախների և նպատակային ժամկետների նախագծերի վերաբերյալ՝ 2018թ. հունիսի վերջ:
- Վերջնական թիրախների և նպատակային ամսաթվերի մշակում՝ 2018թ. սեպտեմբեր:
- ԱՔԵ-ի համակարգող կոմիտեի հանդիպում և վերջնական թիրախների և նպատակային ժամկետների ներկայացում և հաստատում՝ 2018 թ. սեպտեմբեր, և
- Վերջնական թիրախների և նպատակային ժամկետների ընդունում՝ 2018թ. վերջ - 2019թ. սկիզբ:

Վահագն Տոնոյանը ներկայացրեց «Ջուր և առողջություն» Արձանագրության՝ Հայաստանի կողմից վավերացման Ճանապարհային քարտեզը, որը մշակվել էր 2014թ., ինչպես նաև դրա արդիականության և թարմացման անհրաժեշտության վերլուծությունը: Պարոն Տոնոյանը մասնավորապես նշեց. ա) Արձանագրության անդամ հանդիսանալու օգուտները՝ դրա վավերացումից հետո, բ) օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտության բացակայությունը, գ) վավերացման գործընթացի վերանայումը, դ) վավերացման համար պահանջվող քայլերը, ե) դոնորների ծրագրերը համապատասխան նպատակային ոլորտներում, զ) Արձանագրության և Ազգային ջրային ծրագրի պահանջների համեմատությունը:

Շնորհանդեսին հետևեցին հարցերը և քննարկումները՝

- *<u>Ճանապարհային քարտեզի վերանայում</u>*. Ներկա փուլում Ճանապարհային քարտեզի վերանայման անհրաժեշտությունն արդիական չէ: Ներկայացվեց Բնապահպանության նախարարության (ԲՆ) և Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) միջև վավերացման գործընթացի վերաբերյալ երկու խորհրդակցությունների կազմակերպման մասին առաջարկություն: ԱԳՆ-ի կողմից բարձրացված մտահոգությունները կարելի է պարզաբանել և լուծել ՄԱԿ ԵՏՀ քարտուղարության աջակցությամբ: Տեղեկանքային փաստաթուղթը, որը պետք է ուղարկվի ԱԳՆ-ին, վավերացման գործընթացը վերսկսելու համար, պետք է համահունչ լինի ճանապարհային քարտեզի վավերացման առաջարկին:

  Մասնավորապես, Արձանագրության վավերացման վերաբերյալ տեղեկանքները պետք է վերանայվեն և հստակորեն նշեն, որ ա) ջրային կառավարման ազգային քաղաքականության նկատմամբ կիրառվում է Արձանագրության համատեքստում «աղտոտողը վճարում է» սկզբունքը, և բ) Կոնվենցիայի 13-րդ հոդվածում նշված ջրային կոնվենցիայի հղումը կիրառվում է միայն այն երկրների նկատմամբ, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում են նաև ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ջրային կոնվենցիայի անդամներ:

Քննարկման արդյունքում ընդունվեց հետևյալ որոշումը.

- *Հանդիպման մասնակիցները իրենց գոհունակությունը հայտնեցին ՄԱԿ ԵՏՀ-ին և ԵՄՁՆ + ծրագրին՝ Արձանագրության դրույթների ներդրման ուղղությամբ իրենց ցուցաբերած աջակցության համար: Հաստատվեց թիրախների և նպատակային ժամկետների վերանայման աշխատանքների նախնական ժամանակացույցը, և աշխատանքային խմբին հանձնարարվեց ներկայացնել աշխատանքների առաջընթացը ԵՄՁՆ ԱՔԵ-ի հանձնախմբի հաջորդ նիստում:*

Նիստը փակելուց առաջ նիստի նախագահ պարոն Նարիմանյանը վերստին հնչեցրեց ***կայացված որոշումները***՝

1-ին նիստ. Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն

- *Հաշվի առնելով, որ գործողությունների ծրագիրը համարվել է երկրի համար առաջնահերթություն, խորհրդակցության մասնակիցները դիմեցին ԵՄ-ին և ՄԱԿ-ի ԵՏՀ-ին՝ ջրային օրենսդրության համակարգի վերլուծության իրականացման և ԵՄՋՆ+ ծրագրի միջոցով ջրամատակարարման և ջրահեռացման համահավասար մատչելիության ապահովման օրենսդրական սահմանափակումների բացահայտման աշխատանքներում օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով:*
- *Հաշվի առնելով, որ Հայաստանը ստորագրել է Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագիրը, և պարտավորվում է իրագործել ներպետական օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ օրենսդրության հետ, հանդիպման մասնակիցները պայմանավորվեցին Եվրամիության հինգ դիրեկտիվների հետ կապված աշխատանքները քննարկել ԵՄՋՆ ԱՔԵ հաջորդ նիստին, որը կկայանա 2018թ. մարտին: ԵՄ-ին և ՄԱԿ-ի ԵՏՀ-ին (UNECE) խնդրանք է ուղղվել ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակներում օժանդակել Հայաստանին՝ ջրօգտագործմանն առնչվող ԵՄ 5 դիրեկտիվների կիրառման նախնական ճանապարհային քարտեզի մշակման գործում՝ հաշվի առնելով նաև ԵՄ-Հայաստան նոր գործընկերության համաձայնագրի դրույթները:*

2-րդ նիստ. «Ջուր և առողջություն» արձանագրության կիրառումը Հայաստանում

- *Խորհրդակցության մասնակիցները ընդգծեցին ՄԱԿ-ի ԵՏՀ/ԱՀԿ «Ջուր և առողջություն» արձանագրության ներդրման կարևորությունը և առաջարկեցին Արձանագրության համատեքստում վերանայել ազգային թիրախները և նպատակային ժամկետները ՄԱԿ- ի ԵՏՀ քարտուղարության աջակցությամբ:*
- *Հանդիպման մասնակիցները դրական արձագանքեցին թիրախները և նպատակային ժամկետները սահմանելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծման առաջարկին՝ ելնելով նոր իրավիճակի վերլուծությունից: ՋՏՊԿ, ՋՌԿԳ և ԱՆ- ի ներկայացուցիչներին առաջարկվեց փորձագետներ առաջադրել (մեկական փորձագետ՝ յուրաքանչյուր կառույցից) աշխատանքային խմբում ներառման համար:*

3-րդ նիստ. «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման գործընթացի ներկայիս կարգավիճակը

- *Հանդիպման մասնակիցները իրենց գոհունակությունը հայտնեցին ՄԱԿ ԵՏՀ-ին և ԵՄՋՆ + ծրագրին՝ Արձանագրության դրույթների ներդրման ուղղությամբ իրենց ցուցաբերած աջակցության համար: Հաստատվեց թիրախների և նպատակային ժամկետների վերանայման աշխատանքների նախնական ժամանակացույցը, և աշխատանքային խմբին հանձնարարվեց ներկայացնել աշխատանքների առաջընթացը ԵՄՋՆ ԱՔԵ-ի հանձնախմբի հաջորդ նիստում:*

Զեկույցը պատրաստել է Էմմա Անախասյանը:

Նկարները՝ Վահագն Տոնոյանի